Հայք վերստին կախեցին զլապտերն և ցրուեցան գիւղականք որք պատրաստեալ էին 'ի կռիւ. ընդ այս զայրացեալ Յունաց՝ արգելին զՀայս ելանել և մտանել յերկուց դրանց Այրին, բայց նոքա կատարեալ զպաշտօնն դարձան յերուսաղէմ։ Յայնք առ նախանձու ատելութեամբ վարէին ընդ Հայս՝ և խնդրէին գտանել զառիթս խռովութեան և պատրաստ մինչեւ ցհեղուլ զարիւնս, զի բացցի դուռն դնել բարուրանս 'ի վերայ Հայոց. սակայն նոյն իսկ գիւղական Ֆէլլահք այպանէին զնոսա, չյուսալ Դատաւորին և յայլազգիս Երուսաղէմի. զի ոչ կարեն կալ նոքա ընդդէմ հրամանի մեծի Արքային։ Իսկ Թէոդորոս Պատրիարք գտեալ զմիջոց հաշտութեան գիւղականաց ընդ Քաղաքապետին, գնաց բազմութեամբ ուխտաւորաց և միաբանաց 'ի Ս. Ծնունդ յաւուր տօնի Անուանակոչութեան Տեառն ('ի 12 Յունվարի), որոյ ուղղեկից եղեւ Քաղաքապետն բազմութեամբ զօրաց. գլխաւորք և Շէյխք գիւղին ընդ առաջ ելին նմա ամբոխիւ զինուք և երիվարօք, եւ ուրախութեամբ մուծին զնա 'ի Բեթղեհէմ, յերեկոյ եւ յառաւօտ փառօք կատարեցին զՀանդէս Տօնին։ Թէոդորոս ինքն մատոյց զՍ. Պատարագն 'ի վերայ Ծննդեան տեղւոյն Ջերմեռանդ փափաքանօք 'ի փրկութիւն հոգւոց կենդանեաց և ննջեցելոց աղգին։ Եւ 'ի գիշերին յայնմիկ Յայնք փակեալ էին զհարաւային դուռն Այրին ըստ հրամանի Փոխանորդին իւրեանց, բայց Թարգման նոցին եկեալ յերուսաղէմէ եւ բանեալ զնա, և ստիպէր բառնալ զզարդս խորանին որ յԱյրին, այլ ոչ անսացին նմա Հայք, և Ցնաց յերեկոյէ մինչեւ ցժամ պատարագի նոցին, թէպէտեւ եղեւ դժուութիւն և բանք 'ի մէջ երկուց ազգաց եւ Հայք ըստ վաղէմի սովորութեան իւրեանց 'ի ժամ պատարագին ելեալ Թափօրիւ 'ի հիւսիսային դրանէ Այրին, և անցեալ 'ի միջոյ մեծի եկեղեցւոյն դարձեալ իջին յԱյրն 'ի հարաւային դրանէ, նոյնպէս և 'ի վերաբերման և յայլ ժամանակս. և այսպէս փառաւորութեամբ կատարեալ զՀանդէս տօնին, դարձան ուրախութեամբ յերուսաղէմ։ Իսկ բազումք 'ի գիւղականաց Բեթղեհէմի Յայնք և Լատինք յայտնապէս խնդրէին լինել Հայ և յաւելուլ 'ի ժողովուրդ նոցա, որոյ վասն նախանձեալ Յունաց ասէին. թէ Թագա-